Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2
19.03.2026թ.-ին կնքված թիվ PDU-242-02-26
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան **19.08.2026թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և վաճառքների զարգացման վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2026թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/222-26 Լիազորագրի հիման վրա և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Աշոտ Ավագյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.03.2026թ. կնքված թիվ PDU-242-02-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 200 360 000 (երկու հարյուր միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 245 360 000 (երկու հարյուր քառասունհինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.03.2026թ. կնքված թիվ PDU-242-02-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444
Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և
վաճառքների զարգացման վարչության
ղեկավար՝

_____ Գուրգեն Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ք.Երևան, 0078, Հալաբյան 41 ա
ՀՎՀՀ՝ 01223338
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011288025
Հեռ.՝ (060) 713-470, (060) 713-428
Գլխավոր քարտուղար՝

_____ Աշոտ Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.